ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«15» 09 2015 թվական N 197-Ա քաղաք Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՓԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱԼԲԵՐՏ ԱՅՎԱԶՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Առափի գյուղական համայնքի ղեկավար Ալբերտ Այվազյանը, խախտելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջները՝ վերահսկողություն չի իրականացրել շարժական կապի բջջային կայան տեղադրելու նպատակով «Ղ-ՏԵԼԵԿՈՄ» փակ բաժնետիրական ընկերությանը օգտագործման տրամադրված համայնքային սեփականության բնակավայրերի նպատակային նշանակության, այլ հողերի գործառնական նշանակության 0.01 հեկտար, համայնքային սեփականության 08-016-0641-0001 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսքերի, 08-016-0134-0015 կադաստրայի ծածկագրով էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության հողամասերի ըստ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու նկատմամբ, այսինքն՝ կատարել է Հայաստանի Հանրապետության «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 54-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված խախտում:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի գեոդեզիայի և հողային պետական տեսչության (այսուհետ՝ Տեսչություն) «Հողերի օգտագործման և պահպանման խախտումների» 2015 թվականի հուլիսի 30-ի N 04 ակտը և Տեսչության պետի 2015 թվականի օգոստոսի 21-ի N 04 որոշմամբ արված միջնորդությունը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 244^{9}-րդ, 281-283-րդ հոդվածների, «Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի դրույթներով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Առափի գյուղական համայնքի ղեկավար Ալբերտ Այվազյանի նկատմամբ նշանակել 150000 (մեկ հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ տուգանք, որը ենթակա է մուծման Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի 900005243119 հաշվարկային հաշվին՝ 15 օրվա ընթացքում:
2. Որոշման պատճենը երեք օրվա ընթացքում ուղարկել Ալբերտ Այվազյանին:
3. Սույն որոշումը կարող է գանգատարկվել դատական կարգով տասն օրվա ընթացքում:

Ֆ. ՑՈԼԱԿՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է